ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/60

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Ֆ/Ա Արթուր Ռոբերտի Պարանյանի (անձնագիր՝ AH0318648, տրվել է 09.02.2007թ., 007-ի կողմից),

քննելով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար ՀԱԷԿ-ի №3, 4 տուրբոգեներատորների օժանդակ համակարգերի արդիականացման համար ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում Ֆ/Ա Արթուր Ռոբերտի Պարանյանի կողմից 06.08.2021թ. ներկայացված (09.08.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/60 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>Ֆ/Ա Արթուր Ռոբերտի Պարանյանի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Ֆ/Ա Արթուր Ռոբերտի Պարանյանը (հետայսու նաև՝ Բողոքաբեր) 06.08.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով բաց մրցույթ:

Սույն Ընթացակարգին Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 6-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է Խողովակ, որով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

Խողովակ		անկար Ø14x2մմ, պող. 08Х18Н10Т ГОСТ 9941-81 Անվտանգության դասը 4 ըստ НП-001-97 (ПНАЭГ-01-011-97) Սեյսմաանվտանգության կարգը II ըստ НП-031-01 ՕԿ կարգը 4

Ցանկություն ունենալով մասնակցել վերը նշված մրցույթի 6-րդ չափաբաժնին՝ հարցումներ ենք կատարել տարբեր գործարանների, որոնցից ստացել ենք պատասխան, որ տվյալ խողովակները արտադրվում են՝ սակայն խողովակների համար չի սահմանվում Սեյսմաանվտանգության կարգ, միչնդեռ Ընթացակարգի Հրավերով սահմանվել է ոչ միայն Սեյսմաանվտանգության կարգ, այլ նաև Սեյսմաանվտանգության կարգ II, որը ոչ միայն իրականության մեջ չհանդիպող պահանջ է, այլ նաև նման պահանջ չի հանդիպել նաև այնպիսի փորձառու արտադրողների մոտ, որոնք երկար տարիներ զբաղվում են ատոմային բազմապիսի ապրանքների արտադրությամբ:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մր հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Եվ այսպես.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով բաց մրցույթ, որի Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 6-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է Խողովակ, որը մի շարք պահանջներից բացի նաև պետք է ունենա Սեյսմաանվտանգության կարգ II, որը <<մեղմ>> ասած իրականության մեջ որևէ արտադրող ընկերություն խողովակի համար երբեք չի տրամադրել և չի տրամադրում Սեյսմաանվտանգության կարգ II:

Անհասկանալի է մնում, թե ինչու համար է գնահատող հանձնաժողովի կողմից սահմանվել այսպիսի պահանջ, երբ արդեն տեխնիկական բնութագրով հղում է կատարվում կոնկրետ ԳՈՍՏ 9941-81-ին, քանի որ տպավորություն է ստեղծվում, որ գնահատող հանձնաժողովի կողմից արհեստականորեն փորձ է կատարվում դժվարացնել, կամ կրճատել մասնակիցների շրջանակը՝ մասնակցության հայտ չներկայացնելու նպատակ հետապնդելով:

Հետևաբար գտնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից հրավերը կազմելիս թույլ է տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության մի շարք իրավապարտադիր նորմերի խախտումներ, որոնք իրենց հերթին հանգեցրել էր մասնակիցների շրջանակի ընդլայնման:

Ելնելով վերոգրյալից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ենք ներկայացնում նաև արտադրող կազմակերպության կողմից տրված պատասխանի էլ. Փոստի հասցեից արված արտատպման պատճենը:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման

հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունիպատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Բողոքաբերը խնդրել է պարտավորեցնել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին Հրավերի 6-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն:

Այնուհետև՝ 12.08.2021թ., ի լրումն վերը շարադրված բողոքի Բողոքաբերը հայտնել է հետևյալը.

«Հարգելի գնումների հետ կապված բողոքներ քննող անձ, 30.07.2021թ. ներկայացված բողոքով խնդրել էինք՝

Պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ- 15/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ Հրավերի 6-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն:

Հաշվի առնելով, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից տեղի է ունեցել հայտերի բացում և armeps համակարգի միջոցով այլևս հնարավոր չէ հրավերի 6-րդ չափաբաժնում կատարել փոփոխություն, ուստի խնդրում եմ հիմք ընդունել ստորև ներկայացվող նոր բողոքի պահանջը, այն է՝

Պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ- 15/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ չկայացած հայտարարել Ընթացակարգի 6-րդ չափաբաժինը»:

Բողոքաբերը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 13.08.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել վերը շարադրված բողոքը:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 12.08.2021թ թիվ Ε/40/2140-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար «ՀԱԷԿ-ի N13, 4 տուրբոգեներատորների օժանդակ համակարգերի արդիականացման համար ապրանքներ»-ի ձեռք բերման նպատակով ս/թ հուլիսի 15-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 6-րդ չափաբաժնում ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը վերցվել է ՀԱԷԿ-ի N3, 4 տուրբոգեներատորների համակարգերի արդիականացման նախագծից:

Նախագծից շեղումը պահանջում է պարտադիր համաձայնեցում նախագծող կազմակերպության հետ:

Ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված բողոքից հետո, քննարկելով 6-րդ բնութագիրը նախագծողի հետ՝ չափաբաժնում նշված ապրանքի տեխնիկական պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն, որ տվյալ պահանջը կարող է հանվել այն պայմանով, որ ապրանքը պատրաստվի համաձայն ԳՕՍՏ 9941-81 և ունենա անվտանգության 4-րդ դաս՝ ըստ НП-001-97 (ПНАЭГ-01-011-97):

Տվյալ պահին ընթանում է նախագծի անվանացուցակում փոփոխության կատարման մասին պաշտոնական հաստատման գործընթացը:

Քանի որ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնով մասնակցության հայտեր չեն ստացվել և «Գնումների մասի» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն այն հայտարարվելու է չկայացած, ապա, հաջորդ անգամ սույն ապրանքի ձեռք բերման համար գնման ընթացակարգ հրապարակվելու դեպքում, տեխնիկական բնութագրում կկատարվի փոփոխություն»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 13.08.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/60 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/60 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար ՀԱԷԿ-ի №3, 4 տուրբոգեներատորների օժանդակ համակարգերի արդիականացման համար ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):
2. Համաձայն Armeps էլեկտրոնային գնումների համակարգի՝ Ընթացակարգի հրավերի 6-րդ չափաբաժնի մասով հայտեր չեն ներկայացվել:
3. Ա/Ձ Արթուր Ռոբերտի Պարանյանը ներկայացված բողոքի լրացմամբ խնդրել է պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ չկայացած հայտարարել Ընթացակարգի 6-րդ չափաբաժինը:

4. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Ֆ/Ա Արթուր Ռոբերտի Պարանյանի 06.08.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 37-րդ հոդվածի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե ոչ մի հայտ չի ներկայացվել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 13-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգը հայտարարում է չկայացած:

Կարգի 26-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով սույն կարգի 25-րդ կետով նախատեսված գրավոր հանձնարարականը կամ գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնումների համակարգողը կազմում և գրավոր պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է

ներկայացնում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանի նախագիծը, որը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 29-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ պայմանագիրը կնքվելու օրվան հաջորդող օրը հանձնաժողովը համարվում է լուծարված:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 11-րդ կետի 11.1 ենթակետի համաձայն՝ Օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը: Ընդ որում գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի որոշման հիման վրա:

<u>3) ոչ մի հայտ չի ներկայացվել:</u>

Այսպես՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար ՀԱԷԿ-ի №3, 4 տուրբոգեներատորների օժանդակ համակարգերի արդիականացման համար ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով բաց մրցույթ:

Համաձայն Armeps էլեկտրոնային գնումների համակարգի՝ Ընթացակարգի հրավերի 6-րդ չափաբաժնի մասով հայտեր չեն ներկայացվել:

Ա/Ձ Արթուր Ռոբերտի Պարանյանը ներկայացված բողոքի լրացմամբ խնդրել է պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ չկայացած հայտարարել Ընթացակարգի 6-րդ չափաբաժինը:

Պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 12.08.2021թ թիվ Ե/40/2140-21 գրությամբ հայտնել է, որ քանի որ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնով մասնակցության հայտեր չեն ստացվել և «Գնումների մասի» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն այն հայտարարվելու է չկայացած:

Հաշվի առնելով Պատվիրատուի գրությունը, ինչպես նաև Armeps էլեկտրոնային գնումների համակարգի ուսումնասիրության արդյունքում, արձանագրում եմ, որ Ընթացակարգը՝ 6-րդ չափաբաժնի մասով, պետք է հայտարարվի չկայացած, քանի որ

ինչպես արդեն արձանագրվեց այդ չափաբաժնի մասով հայտեր չեն ներկայացվել, որպիսի պայմաններում, Կարգի 29-րդ կետի համաձայն, գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու օրվան հաջորդող օրը հանձնաժողովը համարվում է լուծարված:

Հետևաբար, նոր ընթացակարգ հայտարարվելու դեպքում գտնում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավասու չէ սույն որոշմամբ, պարտավորցնել մեկ այլ ընթացակարգի շրջանակներում, մեկ այլ գնահատող հանձնաժողովին պարտավորեցնելու կատարելու որոշակի գործողություններ, որոնք բխում են մեկ այլ՝ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված բողոքի պահանջներից, մասնավորապես՝ պարատավորեցնել կատարելու փոփոխություն «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 6-րդ չափաբաժնի համար սահմանված տեխնիկական բնութագրում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ֆ/Ա Արթուր Ռոբերտի Պարանյանի կողմից 06.08.2021թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարելու Ընթացակարգի 6-րդ չափաբաժինը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**